**«Հետաքննող լրագրողներ»** հասարակական կազմակերպություն
Երեւան, Բուզանդի 1/3, 8-րդ հարկ, հեռ:(3741) 563363, 580219, 094 40 46 24,
E-mail: info@hetq.am, hetq@hetq.am, URL : www.hetq.am
-----------------------------------------------------------------------------------------------------------

**04.07.2017**

**ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Բոթոյանին**

Հարգելի պարոն Բոթոյան,

«Հետք» թերթը հոդված է պատրաստում հանրապետության դպրոցներում ուսուցչի թափուր հաստիքների վերաբերյալ, ինչի համար խնդրում եմ տրամադրել **Գեղարքունիքի մարզի դպրոցներում ուսուցչի թափուր հաստիքների ցանկը՝ նշելով դպրոցի և հաստիքի անվանումը (դասավանդման առարկան):**

Խնդրում եմ տեղեկացնել.

1) Թափուր հաստիքներից որո՞նք են լրացվում այլ մասնագետի միջոցով (ենթադրենք՝ ֆիզիկայի ուսուցիչը դասավանդում է մաթեմատիկա կամ այլ օրինակ):
2) Ի՞նչ հաճախականությամբ և ընթացակարգով են մրցույթներ հայտարարվում թափուր հաստիքները լրացնելու համար:
3) Հաստիքներից որո՞նք այս պահին չեն կարող լրացվել՝ բյուջեի սղության պատճառով (խնդրում եմ նշել հաստիքի անվանումն ու դպրոցը):
4) Թափուր հաստիքներից որո՞նք են լրացվում այլ ծրագրերի միջոցով (օրինակ՝ «Դասավանդիր Հայաստան» և այլն). խնդրում եմ նշել հաստիքի անվանումը և դպրոցը:

Հարգանքով՝ «Հետք» թերթի լրագրող Մարինե Մադաթյան